ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Վ/175-2023
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
23 հոկտեմբերի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Վարչապետ (խորհրդի նախագահ)	Ն. Փաշինյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	Կ. Անդրեասյան
Փոխվարչապետ	Մ. Գրիգորյան
Անվտանգության խորհրդի քարտուղար	Ա. Գրիգորյան
Արդարադատության նախարար	Գ. Մինասյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար	Հ. Կոնջորյան
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Վ. Վարդանյան
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռ. Բաքոյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Գլխավոր դատախազ	Ա. Վարդապետյան
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	Ս. Խաչատրյան
Մարդու իրավունքների պաշտպան	Ա. Մանասյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	Ռ. Պետրոսյան
Բարձրագույն դատական խորհրդի անդամ	Ե. Թումանյանց
Վճռաբեկ դատարանի նախագահ	Լ. Թադևոսյան
Փոխվարչապետ Միհր Գրիգորյանի գրասենյակի ղեկավար	Է. Մկրտչյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ	Հ. Հարությունյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Կ. Կարապետյան
Փոխվարչապետ Միհր Գրիգորյանի խորհրդական	Վ. Այդինյան
Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար	Ս. Գևորգյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Լ. Ալեքսանյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Մ. Գալստյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Ա. Փաշինյան
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Ղազարյան
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ	Լ. Պետրոսյան
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ	Ե. Կարապետյան

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» ՀԿ-ի գործադիր տնօրեն	Ս. Այվազյան
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար	Ա. Սաքունց
Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ	Կ. Ջաղոյան
Փորձագետ	Ա. Մկրտչյան
ՆԵՐԿԱ ԷՐ՝	
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ	Վ. Մկրտչյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային 1-ին հարց՝ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի նախագծի մասին

1. Զեկույց ներկայացրեց՝ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը՝ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ, մասնավորապես՝

1) նպատակը՝ հակակոռուպցիոն բարեփոխումների շարունակականության և ստանձնած միջազգային կոնվենցիոն պարտավորությունների և հանձնարարականների ապահովումը.

2) ընդունումը բխում է Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից, ՏՀԶԿ-ի հանձնարարականներից, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջից.

3) մշակման աշխատանքներն իրականացվել են բազմաշահառու աշխատանքային խմբի (19 անդամ մարմին, որոնցից 6-ը՝ ՀԿ և լրացուցիչ հրավիրված ևս 5 ՀԿ) կողմից, 3-ամսյա ժամկետում՝ 10-11 քննարկումների արդյունքում.

4) ռազմավարության կառուցվածքը՝ հետևյալ 5 ռազմավարական նպատակներով՝

4.1. կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդում,

4.2. կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում,

4.3. հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում,

4.4. գործարար բարեվարքություն, գործարարների իրավունքների պաշտպանություն, պետություն-բիզնես վարչարարության դյուրացում,

4.5. հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում.

5) անդրադարձավ նաև, ըստ նպատակների, ռազմավարության գործողություններին, խնդրահարույց հետևյալ կետերին և առաջարկություններին՝

5.1. բարելավվելու է ԿԿՀ բարեվարքության ուսումնասիրության գործընթացը (բարեվարքության ուսումնասիրության եզրակացության կազմումը միայն ստուգված և արժանահավատ տեղեկության հիման վրա): Եզրակացության եզրափակիչ մասը դառնալու է հրապարակային:

Հաշվի առնելով կոնսենսուսի բացակայությունը՝ խորհրդի կողմից առաջարկվել է վերախմբագրել գործողությունը՝ սահմանելով, որ եզրակացության եզրափակիչ մասի հրապարակային դառնալու նպատակահարմարության հարցի վերաբերյալ իրականացվելու է ուսումնասիրություն: Վերանայվելու է նաև ԿԿՀ եզրակացության հիմքում ընկած չափանիշների ցանկը.

5.2. միջազգային լավագույն փորձի լույսի ներքո բարելավվելու է պետական մարմիններում և ՏԻՄ-երում էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, մշակվելու են գործունեության հստակ ուղեցույցներ:

ԿԿՀ-ի կողմից առաջարկվում է բարեվարքության հարցերով կազմակերպիչները հանդիսանան վերջիններիս հատրիքային աշխատակիցները և գործուղվեն համապատասխան գերատեսչություններ: Խորհուրդն առաջարկեց վերախմբագրել գործողությունը՝ նախատեսելով ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և վերանայել բարեվարքության հարցերով կազմակերպչի կարգավիճակը.

5.3. ԿԿՀ նոր գործառույթների զարգացման հաշվառմամբ վերանայվելու են դրա կառուցվածքը և հաստիքացուցակը, անդամների ընտրության/պատասխանատվության կարգը, սոցիալական երաշխիքները: Սահմանադրական բարեփոխումների խորհրդում քննարկվելու է վերջինիս սահմանադրական կարգավիճակ տալու նպատակահարմարության հարցը: ԿԿՀ-ի կողմից առաջարկվում է անդամներին տալ դատավորներին հավասար սոցիալական երաշխիքներ, ինչպես նաև ռիսկայնությունից խուսափելու նպատակով դիտարկել աշխատակազմը քաղաքացիական ծառայության համակարգից դուրս բերելու հնարավորությունը:

Խորհրդի կողմից առաջարկվել է աշխատակազմի կարգավիճակի հարցը դիտարկել Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում՝ խուսափելով քաղաքացիական ծառայության համակարգից դուրս գալուց.

5.4. Ներդրվելու է իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության նոր մեխանիզմ՝ ռիսկային մշակվող ակտերի (ex ante) և, անհրաժեշտության դեպքում, դրանց հետ

կապակցված և գնահատման համար անհրաժեշտ, արդեն իսկ ընդունված ակտերի (ex post) փորձաքննություն: Սահմանվելու է լիազոր մարմին, և զարգացվելու են դրա կարողությունները:

ԿԿՀ-ն առաջարկում է փորձաքննությունն իրականացնել վերջիններիս կողմից, սակայն խորհրդի կողմից առաջարկվեց նշված գործառույթի իրականացումը վերապահել գործադիր իշխանության մարմիններին՝ իբրև քաղաքականություն մշակողների:

5.5. ապահովվելու է հավատարմագրային կառավարման ինստիտուտի արդյունավետ գործարկումը, որով հստակեցվելու են բաժնեմասերի կառավարիչների իրավակազմակերպչական ձևերը, նրանց շահերի բախման դեպքերը, կառավարման պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստրը և վարման կարգը:

Որպես այլընտրանք ԿԿՀ-ի կողմից առաջարկվում է անհամատեղելիության պահանջների և շահերի բախման պահպանման վերահսկողության համար ընտրված հավատարմագրային կառավարման ինստիտուտը չեղարկել՝ հստակեցնելով պետության քաղաքականությունը բիզնես գործունեության և հանրային պաշտոնի համատեղելիության առնչությամբ, և արդյունքում սահմանել կա՛մ բացարձակ արգելք հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բիզնես գործունեությամբ զբաղվելու առնչությամբ, կա՛մ թույլատրել բիզնես գործունեությամբ զբաղվելը՝ ապահովելով թափանցիկության և հաշվետվողականության այնպիսի մակարդակ, որը թույլ կտա հստակ վերահսկել շահերի բախման հավանական, թվացյալ և փաստացի դեպքերը:

Խորհուրդն առաջարկեց ամրագրել հնարավոր տարբերակների հետագա քննարկումը և, անհրաժեշտության դեպքում, վերանայել և ներդնել թափանցիկության և հաշվետվողականության նոր ինստիտուտի գործարկումը.

5.6. իրականացվելու է 2023 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառման վերլուծություն:

Զեկուցողի կողմից տեղեկացվեց, որ , չնայած սույն ինստիտուտը նոր է գործարկվել, սակայն դրա կիրառման վերլուծության արդյունքում պարզել են, որ դեռևս քրեական գործերն արդյունքներ չեն գրանցել, և պարճառը կարող է հանդիսանալ պրակտիկ կիրառման հնարավոր խոչընդոտների և օրենսդրության բացթողման հետևանք, որը պետք է լավարկվի կամ ամբողջությամբ փոփոխվի՝ իրավապահների և դատախազության գործընկերների հետ քննարկումների արդյունքում.

5.7. վերանայվելու է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով ՊՈԱԿ/ՀՈԱԿ ղեկավարներին և այլ ռիսկային պաշտոն զբաղեցնող անձանց:

Խորհրդի կողմից առաջարկվեց հայտարարագրման ենթակա ՊՈԱԿ/ՀՈԱԿ ղեկավարների ցանկը դասակարգել ըստ առաջնահերթության, ինչն անհրաժեշտ է սահմանել՝ ըստ որոշակի շեմերի, օրինակ՝ դրամական շրջանառության.

5.8. կատարելագործվելու են պաշտոնատար անձանց կողմից նվերների ընդունման վերաբերյալ կարգավորումները՝ սահմանելով ստացված նվերների գնահատման, հաշվառման, ոչ թույլատրելի նվերների հանձնման, տնօրինման կառուցակարգեր, նվերների ռեեստրի վարման կարգավորումներ:

Քննարկումների արդյունքում արձանագրվեց, որ նվերների ընդունման կարգավորումների հստակեցման և խստացման հետ մեկտեղ հանրային ծառայողները պետք է պաշտպանվեն այդ կարգավորումներով.

5.9. ներդրվելու են լոբբիստական գործունեության կարգավորումներ:

Խորհրդի կողմից առաջարկվեց վերանայել ձևակերպումը՝ իբրև «լոբբիստական գործունեության թափանցիկության կարգավորում»:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն անդրադառնալով՝

1.1. ԿԿՀ-ի կողմից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնելու գործառույթն ստանձնելու ցանկությանը՝ նպատակահարմար համարեց վերջիններիս կողմից մասնագիտացված եզրակացության ներկայացումը՝ փորձաքննության գործառույթի իրականացումը վերապահելով Կառավարությանը,

1.2. նվերների ընդունման կառուցակարգերին՝ նշեց, որ կարգավորումների կիզակետում պետք է դրվեն նվերների ընդունման թափանցիկությունը, վերջիններիս հայտարարագրման և նվերների ռեեստրում արտացոլման անհրաժեշտությունը՝ դրանով ԿԿՀ-ին հնարավորություն տալով վերլուծություն կատարելու պաշտոնատար անձի վերաբերյալ ներառական մոտեցմամբ և ոչ թե անհատական դրվագներով.

2) «Թրանսպարենսի Ինթերնեյշնլ» ՀԿ-ի գործադիր տնօրեն Սոնա Այվազյանը, անդրադառնալով իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության մեխանիզմներին, նպատակահարմար համարեց հիմք ընդունել միջազգային փորձը.

3) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Արթուր Սաքունցն անդրադառնալով՝

3.1. իրավական ակտերի և կոռուպցիոն հանցագործությունների փորձաքննության իրականացմանը՝ նպատակահարմար համարեց բուհերի հավատարմագրման և լիցենզավորման

գործընթացում համապատասխան բաժիններում նախատեսել մասնագետների պատրաստման համար կրթական ծրագրեր,

3.2. ԿԿՀ-ի կողմից բարեվարքության ուսումնասիրության ընթացակարգին՝ առաջարկեց նախատեսել բարեվարքության գնահատման չափանիշներ.

4) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանն անդրադառնալով՝

4.1. պատգամավորների համար վարքագծի կանոնների մշակմանը և դրանց վերահսկման մեխանիզմի՝ Ազգային ժողովի էթիկայի մշտական հանձնաժողովի ստեղծմանը՝ տեղեկացրեց, որ սույն կառուցակարգի իրականացման համար առկա է սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն, որը, ըստ կարգավորումների, ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով,

4.2. կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված քայլերին՝ ուշադրություն հրավիրեց որոշ կազմակերպությունների կողմից հովանավորվող և հանրային ծառայողների կրկնվող գործուղումների վրա՝ իբրև վերջիններիս նկատմամբ ազդեցության գործիքի.

5) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանն անդրադառնալով՝

5.1. կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված քայլերին՝ տեղեկացրեց, որ առկա է խնդիր նաև չհիմնավորված եկամուտները՝ հարսանյաց, ծննդյան, կնունքի միջոցառումներին ստացված նվերները հիմնավորելու հարցում,

5.2. բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությանը՝ առաջարկեց վերանայել և վերջիններիս տրամադրել բավարար անկախության երաշխիքներ՝ միասնական կարգավորման դաշտում.

6) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, անդրադառնալով նվերների ինստիտուտի կանոնակարգմանը, նպատակահարմար համարեց հստակեցնել նվիրատուների շրջանակը.

7) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Արսեն Ղազարյանը նպատակահարմար համարեց ունենալ «Լոբբիզմի մասին» օրենք, որով կկանոնակարգվի շահերի բախումը և կկանխարգելվի կոռուպցիան:

3. Վարչապետի կողմից հանձնարարվեց՝ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին՝ վերանայել և լրամշակել ռազմավարության նախագիծը՝ հիմք ընդունելով խորհրդի նիստում հնչեցված հետևյալ առաջարկությունները՝

1) համապատասխան կետից հանել «(եզրակացության կազմումը միայն ստուգված և արժանահավատ տեղեկության հիման վրա)։ Եզրակացության եզրափակիչ մասը դառնալու է հրապարակային» ձևակերպումը, առաջիկայում վերանայել, բարելավել՝ ձևակերպելով միտումը, սահմանելով բարեվարքության գնահատման ցուցանիշների և տեղեկատվության հավաքագրման հստակ ստանդարտներ, ինչպես նաև ներկայացնել հստակ դիրքորոշում եզրակացության եզրափակիչ մասի հրապարակման կամ չհրապարակման մասով.

2) համապատասխան կետով ամրագրել հետևյալ ձևակերպումը՝ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացումը վերապահել գործադիր իշխանությանը՝ միաժամանակ ապահովելով ԿԿՀ-ի կողմից եզրակացություն ներկայացնելու իրավասությունը (Մարդու իրավունքների պաշտպանի օրինակով) և ստանդարտների մշակման մասով մասնակցությունը.

3) բարեվարքության համակարգի կատարելագործման շրջանակներում նվերների ինստիտուտը լավարկելու նպատակով քննարկել Ազգային ժողովի, Կառավարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և ՀԿ-ների հետ՝ սահմանելով նվերի իրավական հասկացությունը, կանոնակարգելով պաշտոնատար անձանց իրավահարաբերությունների շրջանակներում արարողակարգային և այլ նվերների ստացման կանոններն ու ողջամիտ շեմը՝ առկա ռիսկերը կանխարգելելու նպատակով.

4) նվերների ինստիտուտի ներդրման շրջանակներում վարքագծի կանոնների մասով ապահովել հանրային լայն իրազեկում.

5) լոբբիստական գործունեության կանոնակարգման վերաբերյալ ձևակերպումները լրացնել «թափանցիկություն» բառով.

6) համապատասխան կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «վերանայվի կամ քննարկվի հավատարմագրային կառավարման ինստիտուտի արդյունավետ գործարկումը, որով հստակեցվելու են բաժնեմասերի կառավարիչների իրավակազմակերպչական ձևերը, նրանց շահերի բախման դեպքերը, կառավարման պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստրը և վարման կարգը»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ